ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի <<Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնը համալրելու համար.

ընտանեկան բժիշկ – 1.0 դրույք

ընտանեկան բուժքրույր-1.0 դրույք

ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթին կարող է մասնակցել ցանկացած անձ, ով կբավարարի ստորև նշված պայմաններին՝

1.բարձրագույն և հետդիպլոմային կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ.

2.վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն (եթե մասնագիտացումն ավարտելուց անցել է առավել քան 5 տարի)

3. բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի, ով ունի կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է

1) դիմում/լրացվում է տեղում/

2) մեկ լուսանկար 3x4 չափի,

3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),

4) ինքնակենսագրություն,

5) անձնագրի, բարձրագույն և հետբուհական (ում բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները և բնօրինակները,

6) արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դիմումատուի ցանկությամբ,

8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կծանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր <<Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ ժամը 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ գյուղ Գեղաշեն , 2-րդ փող.,17 տուն):

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 18.07.2018թ. ժամը 15:00:

Մրցույթը կկայանա <<Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 2018 թվականի հուլիսի 20-ին ժամը 13:00-ին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում:

<<Գեղաշենի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի աշխատանքային խումբ